

**Համաշխարհային Հայկական Կոնգրեսի Նախագահ  
Արա Արամյանի  
Ամանորյա ուղերձը սփյուռքահայությանը**

**Սիրելի սփյուռքահայեր,  
եղբայրներ ու քույրեր**

Համաշխարհային Հայկական Կոնգրեսի անունից և անձամբ իմ կողմից շնորհավորում եմ Ձեզ բոլորիդ Նոր տարվա և Սուրբ Ծննդունդի կապակցությամբ, ցանկանում եմ բարգավաճում, երջանկություն և բարօրություն:

Արդի պայմաններում աշխարհում ստեղծված իրավիճակը, տեղի ունեցող իրադարձությունները հրամայաբար պահանջում են միավորել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ համայն Սփյուռքում ապրող հայերի ջանքերը: Մենք չպետք է մոռանանք, որ մեր թշնամու կողմից հրահրված տարանջատվածությունը մեծ վնաս է հասցնում մեր ժողովրդին: Սրանից էլ բխում է համազգային համահավաք ներուժի գործադրման անհրաժեշտությունը՝ որպես Հայաստանի և Սփյուռքի առջև ներկայումս ծառայած ընդհանուր և առաջնային հիմնահարցերի լուծման կարևորագույն պայման:

Մեր ժողովրդի համար պատմական պահի բախտորոշության գիտակցմամբ էր պայմանավորված այն իրողությունը, որ 2003 թվականի հոկտեմբերին Մոսկվայում հրավիրվեց Համաշխարհային հայկական Կոնգրեսի Հիմնադիր համագումար, որը ստեղծեց համահայկական միջազգային կառույց:

Սփյուռքը հայության անկապտելի մասն է: Հայության մեծամասնությունն ապրում է Սփյուռքում: Սփյուռքի բարօրությունը, հավասարապես նաև մեր պատմական Հայրենիքի տնտեսական վերածնունդն ու անվտանգությունը, պետականության ամրապնդումը համաշխարհային համահայկական նոր կառույցի առջև դրված խնդիրների համակարգում առաջնային տեղ են գրավում:

Սփյուռքահայերը երախտագիտության զգացում տածելով այն երկրների նկատմամբ, որոնք դարձել են իրենց նոր հայրենիքը, ամեն ինչ անելով ի բարօրություն այդ երկրների, միաժամանակ իրենց հայացքներն ուղղել են անկախության ճանապարհի ընտրած պատմական Հայրենիքին: Համաշխարհային Հայկական Կոնգրեսը աջակցելու է սփյուռքահայության բնակության երկրների ու Հայաստանի բարեկամական հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը, Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացմանը՝ միջազգային իրավունքի հիման վրա ցեղասպանության հետևանքների վերացման ճանապարհով, Ղարաբաղի հարցի քաղաքական կարգավորմանը, համաշխարհային հայության տնտեսական և քաղաքական ներուժի զորեղացմանը, ազգային ինքնուրույնության պահպանմանը, մարդկությանը սպառնացող վտանգների դեմ պայքարին:

Մեր նշանաբանն է՝ բազմազանության մեջ մնալ միասնական, **քանզի միասնությունը ուժի և հզորության աղբյուր է:** Դա է մեր հաջողության գրավականը:

**Համաշխարհային Հայկական Կոնգրեսի  
Նախագահ**

Ա. Արամյան